

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԽԸ. ՏԱՐԻ — 1934

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

Փոփոխութեան փոփոխութեան ԿՈՂՄԱՆԻ Ի ՎԻԵՆԱՆ ԱՂՆԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԱԳՁԱԿԻՆ ԵՆ ՕՏԱՐ ԲԱՆՏԱՆԵՐՆԵՐՈՒ:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրութեան օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շարունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր քանասիրական յոդուածներուն համառոտ մէկ ամփոփումը, միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագրին է առեւ նրկուի համար՝ 1 ֆրանկ տնային, կամ օրինակ:

Մեր հասցէն՝

REDACTION DE LA REVUE "HANDES AMSORYA," VIENNE (Autriche), VII., Mechitharistengasse 4.

Հ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պր. Հակոբ Մայիսասեան մեկ տարուան "Հանդես Ամսորեայ", կը նուիրէ Սօֆիայի Բրիտանացի Բնօրհնոյ Գիշերահանդէսին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Խմբագրութեան տնային տնային):

Աղաւեան Արշակ, Մարչ դաշնամուրի համար: Երեւան, Պետհրատ, 1934, էջ 22: Գինն՝ 5 ր.: Աղբրեղանեան Ժամանակակից խորհրդային դրականութիւն, Անտոլոգիա. Անդրկովկասեան Ժամանակակից խորհրդային գրականութիւն: Ա. հտր.: Երեւան, Պետհրատ, 1933, 80, էջ 284: Գինն՝ 4 ր.: Առաքելեան Պ., Մփանքներ, 1926—1933: Ֆիլատելիա 1933: 80, էջ 100: Գինն՝ 1 րուլար: Դիմել՝ P. Arakelian, 22—71, 24th Street, Astoria, L. I., N. Y. Արագի, Եկոլորները, պատմութեան քննարկ: Երեւան, Պետհրատ, 1933: 80, էջ 148: Գինն՝ 2 ր.:

Բալաղեան Լ., Ուսանողների եւ նորաւարտ մասնագէտների աշխատանքային արտօնութիւնների մասին: Երեւան, 1933: 80, էջ 80: Գինն՝ 1 ր.: Բախտիկեան Ս. Ա., Արարիք եւ շրջակայի գիւղերը. պատմական-ազգայնական համառոտ տեսութիւն Պէյրութ, տպ. Վահագն, 1934: 80, էջ 160, պատկերազարդ: Գինն՝ 10 ֆր.: Դիմել՝ Hrant H. Arabdjian, B. P. 870, Beyrouth, Liban. Բախտիկեան Ս., Սյուրիտա, դաշնամուրի համար: Երեւան, Պետհրատ, 1934: 40, էջ 8: Գինն՝ 2.50 ր.: Բրիտանական վարչի, Տարեգրութիւն հայ ժողովրդեան պատմական ճակատագրին, թրգմ.:

"HANDES AMSORYA,"

MONATSSCHRIFT FÜR ARMENISOHE PHILOLOGIE

XLVIII. JAHRGANG — 1934

Herausgegeben und redigiert von der MECHITHARISTEN-KONGREGATION IN WIEN unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten die Benützung unserer Zeitschrift zu erleichtern, werden wir fortlaufend von den wichtigen philologischen Abhandlungen ein kurzes Resumé in einer europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Թի 3, 4

ՄԱՐՏ—ԱՊՐԻԼ

ԽԸ. ՏԱՐԻ 1934

ԹՈՒՆԻԿԵԱՆ ՃԻՒՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց, Վրաց եւ Յունաց քաղաքական եւ քաղաքակրթական պատմութեան մէջ կարեւոր դեր կատարած են Թոունիկեանք ժ. Ժ. Գ. դարու մէջ:

Բազմաճղի իշխանական տանս ծագումն եւ ճիւղաւորումը երեւան բերելու եւ տանս անդամներու պատմական կեանքը նկարագրելու համար անբաւական են աղբիւրները, որոնք կը հոսեն հայկական, վրական եւ բիւզանդական մատենագրութենէ: Իսկ իշխանական տանս այլ եւ այլ ճիւղերու մէջ յաճախակի կրկնումը մի եւ նոյն անուններու կը դժուարցնէ անձանց նոյնացումը եւ դէպքերու ժամանակագրական դասաւորութիւնը:

1. Մթութեան մէջ է Թոունիկեան տան խանձարուրքը: Թէ այս տունը Մամիկոնեան եղած է, կարելի է ստույգ համարել հիմնուած Գրիգոր Մաղիստորոսի վրայ, որ իւր առ թոունիկ տէրն Մասնոյ ուղղած չորս թղթերը կը մակագրէ «առ իշխանն Մամիկոնեան»: Սասանի Թոունիկեան ճիւղը ստանց տարակուսի ընձիւղած է Տարօնի Թոունիկեան բունէն: Այստեղ առաջին անգամ երեւան կու գան Թոունիկեանք 850ին յանձին անձանթ իշխանի մը, որ «որդի Թոունիկայ» կը կոչուի: Թովմայ Արծրունու այն տեղիքը, ուր կը յատակուի Թոունիկայ որդին, սողի մը անկում ենթադրել կու տայ, զոր դժուար է այժմ լրացնել. կը դրէ Թովմա, թէ Բաղարատ Տարօնի իշխանայ իշխանի ընդդէմ Մուսէի օդնութեան հասան 850ին այլ եւ այլ իշխանական տոհմեր, որոնց թուին մէջ են. «արք ժ. Ժ. ի տանէն Արծրունեաց զորքն իւրեանց. եւ ի տանէն Բաղարատեանց <|||> Թոունիկայ որդի զորք իւրովը. ի տոհմէն Ամատունեաց Շապուհ Ը հարազատօք եւ զորք իւրեանց, ի տոհմէն Գնունեաց Գրիգոր որդի Հազրի վեց այլ եւս հարազատօք եւ զորք իւրեանց» են (էջ 109): Այս տեղ յայտնապէս

դուրս ինկած է Բաղարատեանց տան իշխանին անունը, որ ըլլայ թերեւս Իշխանիկ, ուստի եւ առաջին պարբերութիւնը լրացնելու է «ի տանէն Բաղարատեանց <Իշխանիկ որդի||| զորք իւրովը>: Իսկ երկրորդ պարբերութիւնը՝ «ի տանէն Մամիկոնեանց Յովնան» (կամ Գուրգիկ) > Թոունիկայ որդի»: Արծրունի պատմիչը հոս նիզակակից իշխանները կը թուէ անուններով եւ հայրանուններով. ամէն դէպքին Թոունիկայ որդւոյն անունը կը պահուի:

2. Այս Թոունիկները իրրեւ Մամիկոնեաններ ունէին անշուշտ արեւակցական կապ Բաղարատեանց Մամիկոնեան տան հետ եւ ասոնք ալ Տայոց աշխարհը ապաստան գտած Մամիկոնեանց հետ:

Յայտնի է Ղեւոնդէն, թէ 773ին Արտաւազգ Մամիկոնեան Հմայեակի որդին ապստամբելով Արարացուց դէմ եւ սպաննելով ի Կուսայրի Շիրակայ «զհրամանատար հարկին» եւ «որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով, զնայր ի կողմանս Վրաց աշխարհին եւ ընդ նմա ամենայն նախարարք աշխարհիս» (էջ 138): Արտաւազգ հասնելով Եգերացուց (Աջարացուց) աշխարհը «ստանայր անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացուց եւ ի վերայ Վէսիւց, որ են Վիրք»: Կը յաջորդէ 774ի ապստամբութիւնը, զարձեալ Մամիկոնեանց՝ այս անգամ Հրահատայ որդւոյն՝ Մուշեղի ղեկավարութեամբ. որուն հետեւութեամբ բնա-

1 Հմմտ. Թ. Արծր. 194. «Եւ էր յայնժամ առեալ ի Յունաց քաղաքար Իշխանիկ (տպ. Գաղաքար Իշխանիկ) կոչեցեալ ի տոհմէն Բաղարատեանի զբերդն Արամանեակ կոչեցեալ...» այսպէս իմացիր նաեւ թէ յետոյ. «Եւ Արեւելեաց զորավարն եկեալ պատերազմել ընդ Իշխանիկան (տպ. իշխանական) առնուլ զամբողջն... եւ ինքն անցեալ զնայր առ Իշխանիկն (տպ. իշխանիկն) ի յամուրն Աշխարհաբերդն կոչեցեալ»:

2 Մարկուարտ, Südarmanien, 495. այսպէս կը կարդայ Եգերուրի աղաւաղում մէկ ընթերցումը՝ «Յովնան որդի Թոունիկայ». Հմմտ. եւ Բ. Նալաթեանց, Արարացի մատենագրեր, 122 եւ Թ. Արծրունի 188:

3 Թ. Արծրունի 191 «Գրիգոր Գուրգիկայ որդի Մամիկոնեանց տէր»:



Ջնջուեցան Մամիկոնեանք արարական տիրապետութեան տակ գտնուած հողամասերու մէջ:

Արտաւազ Մամիկոնեանի իշխանութեան տեւողութիւնը յայտնի չէ մեզի: Աջառայի իշխանութիւնը անշուշտ երկար ժամանակ չնայ իր եւ յաջորդներուն ձեռքը, երբ մահաւանդ տիրացաւ Արղանուջի Վասակ Բագրատունի 774էն ետքը: Հաւանական է ենթադրել թէ Մամիկոնեանք ամփոփուեցան Տայոց աշխարհը, ուր ի բնէ ունէին իրենք կալուածքներ: Այս տեղ երեւան կու գայ ժ. դարու մէջ Թոռնիկեան մէջ նոր ճիւղը որուն առաջին ներկայացուցիչն է Պատմութեան մէջ Չորտուանէլ, յիշուած Կոստանդին Յիրանաճնի օրով (913—959):

Թէ Տայոց աշխարհն եւ թէ Տարօնի այն մասը, որ կը գտնուէր Մամիկոնեաններու իշխանութեան տակ, թ. դարու վերջերը կա՛մ արդէն Յունական ազդեցութեան տակ էր եւ կա՛մ նոր ենթարկուած անոր:

Տայեցիք Արղանուջի Կիւրապաղատին տակ էին. իսկ Տարօն եւ Սասուն արեւելեան բանակի իշխանութեան ենթարկուած:

Բիւզանդիոնի հետ անմիջական յարաբերութիւնը ձգեց շատ հայեր դէպի կայսերական մայրաքաղաք. անոնց թուին մէջ կային նաեւ Թոռնիկեաններ, թէ Տայքէն եւ թէ Տարօնէն: Անոնք ձեռք բերին թէ՛ քաղաքին եւ թէ՛ բանակին մէջ բարձր դիրքեր. եւ շատ անգամ բաժին բերին քաղաքական խնդիրներու մէջ: Անդորութիւնը, որ առաւել չափով կարելի էր գտնել քաղաքին շրջակայքի վանքերու մէջ եւ յԱթոս, հրապուրեց յինքն շատ Թոռնիկեաններ, որոնք նախընտրելով այդ կեանքը՝ լքեցին հայրենիքի մենաստանները եւ պայծառացան հոն:

Այս անձուկ աղերսը, զոր ունեցան Թոռնիկեանք Բիւզանդիոնի հետ, ստիպեց զանոնք լքել նաեւ հայրենի աւանդութիւններն եւ ազգային ծէսը, եւ յարիւ որթողութեան եկեղեցւոյ՝ ընդունելով յունական ծէսն եւ դաւանութիւնը: Գրիգոր Մագիստրոս իւր առ Թոռնիկ Թոռնիկեան Մամիկոնեան իշխանն Սասնոյ գրած թուղթին մէջ յայտնապէս կը գրէր. «Բայց դու, Մամիկոնեան, որ համոզեան հաւանեցար Ղեւոնդեան ընդարձակազոյն տոմարի, ո՞ր ոք է քէն կարասցէ կորզել դուզակս» (ձկուեն) (Թուղթք, էջ 214), ակնար-

4 Հմմտ. Յ. Մարկուարտ, Բագրատունեաց ծագումը, Վիեննա 1913, էջ 73յյ.:

կելով թէ իբրեւ յունական եկեղեցւոյ հետեւող՝ նաեւ ուրբաթ օրերը ձկնակեր եղած է:

3. Չեռնարկելով այս տեղ կազմել Թոռնիկեանց ճիւղազրուութիւնը, մեր նպատակը չէ գրել անոնց գործունէութեան պատմութիւնը: Պիտի յիշենք միայն անհատներու հետ անընդմիջապէս կապուած դէպքերը: Իսկ ճիւղազրուութեան պիտի ենթարկենք միայն Տայոց եւ Սասնոյ Թոռնիկեան ճիւղերու անդամները. որովհետեւ կը պակասին մեզ ազգակցական տեղեկութիւններ Բիւզանդիոնի մէջ բուն դրած Թոռնիկեանց մասին: Բայց եւ այնպէս զանց պիտի չընենք դոնէ համառօտիւ յիշել պատմութենէ ծանօթ դէմքերը:

Թոռնիկեանց ճիւղազրուութեան համար երկու կարեւոր յիշատակարան հասցուցած է մեզի Վրաց գրականութիւնը, գրուած 977ին եւ 981 Յովհաննէս-Թոռնիկ վանականի յանձնարարութեամբ: Այս կրկին յիշատակարանները, զորոնք յառաջ պիտի բերեմ հայերէն թարգմանութեամբ, առիթ տուած են P. Peeters գիտուն Բոլլանդեանին, զբաղելու Թոռնիկեանց ճիւղազրուութեամբ: Իր յոռած թանկագին լուսարանութիւնները նկատի պիտի առնուին գրութեանս մէջ:

4. Վրական Յիշատակարանք: — ա. Աթոսի Վրաց վանքի վրացերէն ձեռագրիներու թ. 9 հաւաքածոյն, որ կը պարունակէ Ս. Նիքիթի եւ Յովհ. Ոսկերեանի ձառերը, գրուած է Օշք վանքը (վր. Ուշքի) 977ին. Յովհաննէս-Թոռնիկ կրօնաւորի հրամանաւ: Ձեռագրին մանր ցուցակազրուութիւնը տուած է R. P. Blake⁶, հրատարակելով նաեւ յիշատակարանները վրական բնագրով եւ դադրեւրէն թարգմանութեամբ: Յառաջ կը բերեմ նոյնը հայերէն հետեւելով Blakeի դադր. թարգմանութեան.

«Ես Յովհաննէս, որ յառաջ Թոռնիկն կուչէի, եւ եղբայրն իմ Յովհաննէս Վարազվաչէ, որդիք օրհնելոյն Չորտվանելի⁷, ստացաք եւ գրեցաք զմատեանս զայս որ անուանեալ կոչի Բուրաստան ի Սուրբ Հարց. յորում գտանին պէսպէս շնորհք յօգուտառողութեան ուղոց.

⁵ P. Peeters, Un colophon géorgien de Thornik le moine. Analecta Bollandiana, t. 50 (1932), p. 358—371.

⁶ Robert P. Blake, Catalogue des Manuscrits géorgiens de la Bibliothèque de la laure d'Iviron au mont Athos. Revue de l'Orient chretien, VIII (1931/2), էջ 337—339:

⁷ Անունս Հայերը Չորտվանէլ, Չորտուանէլ, նաեւ Չարտուանիկ կը գրեն. վրական ձեւն է Չորտվանելի:

առ ի յիշատակ⁸ եւ ի գովութիւն մանաւանդ հօր եւ բարեպաշտ կիւրապաղատին Դաւթայ...: Եւ զինի նոցա առ ի յիշատակ⁸ մեր, մանաւանդ ի վեր անդր յիշելոյ Յովհաննու Թոռնիկայ, (որ) այժմիկ (չնորհիւ) սուրբ թագաւորացն՝⁹ Յովհաննէս սիւնկեղղոսն (կոչի), որ առ սէր Աստուծոյ եթող զմեծութիւն երկրաւոր եւ եզիտ զերկնաւորն. քանզի իբրեւ դտանէր ի բարձունս պայծառութեան նոցա եւ շնորհաց սուրբ թագաւորացն, փութաց փոփոխել զզգեստ զինուորութեան՝ առ ի զգենուել զհանդերձ կրօնաւորական եւ ընդ նովաւ մեծապէս եւ ըստ օրինաց եհար ծառայութիւն ծառայն կենաց եւ սրբոց թագաւորաց: Եւ իբրեւ երեւեցաւ ի վերայ երկրին Հոռոմոց այր ոմն ամբարիշտ եւ անօրէն¹⁰, որ ի վսեր եկեալ յանդգնէր ընդդէմ սրբոց թագաւորացն⁹, նոյն (Թոռնիկ) գնաց փութանալի առ հօրն եւ անյաղթն ամենայնիւ առ Կիւրապաղատն Դաւթի, եւ հրամանաւ նոցա եղծեալ ասականեաց զայս խորհուրդ նորա եւ հաստատեաց միւսանգամ զսուրբ թագաւորս. զորոց զհօգի եւ զմարմին պահեսցէ Աստուծո: Ապա (առ ի յիշատակ) Յովհաննու Վարազվաչի, կնոջն նորա եւ որդւոցն՝ Միքայէլի եւ Չորտվանելի զօրավարի եւ չորտլոգի եւ Թոռնիկայ. եւ եղբորորդւոցն իմոց՝ Չորտվանելի եւ Բաղ(ա)րատայ պատրիկ. առ ի յիշատակ⁸ ողոց Բաղ(ա)րատայ Մագիստրոսի. եւ ծնողացն իմոց Չորտվանելի եւ Մարեմայ. եւ եղբարցն իմոց Բագարատայ, Արշուլայի եւ Աբուհարբայ. եւ հօրեղբարցն իմոց Աբուհարբայ եւ Արշուլայի եւ ամենայն հանդուցելոցն տանս մերոյ...:

Գրեցաւ սուրբ մատեանս այս ի հռչակաւոր վանս Օշք¹¹, ընդ հովանեաւ սուրբ Կարապետի, յարբայութեան Սարբայ, զոր Բրիտոն օրհնեացէ, ձեռամբ երիցուն Ստեփանոսի եւ նորին ձեռամբ կապեցաւ, զոր Աստուած օրհնեացէ: Եւ էր ամն շրջանին զատկաց ձՂԷ (977)¹². գրեցի զմատեանս զայս ես Դաւիթ,

⁸ Peeters եւ Blake կը թարգմանեն «աղօթք» գրիչք բոս իմաստին:

⁹ Կակնարկուին Վասիլ Բ. (976—1025) եւ կայսերակիցն Կոստանդին Բ. (976—1028):

¹⁰ Խօսքը Վարդ Սիւնկերոսի ասպտամբութեան մասին է:

¹¹ Վրացերէն Ուշքի, այն է ըստ Հայոց Աշունք. այժմ Խօջը, Խօջայ վանք նաեւ պարզապէս Վանք (գիւղ) կոչուած, Թորթումի հովտին մէջ. վանքին կամ եկեղեցւոյն նկարագրութիւնն եւ յատակագիծը տես Հ. Ն. Մարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս. Վեներտիկ 1864, էջ 86—91:

¹² Այս ինքն հիմ առնելով 780 տարին, որ է սկիզբն

որդի քեռ հօրն աստուածակիր Միքայէլի Մուրկիելի¹³: Եթէ անդիտութեամբ վրիպակք ինչ եղեն ի մատենիս, շնորհեցէք վասն Աստուծոյ զներել թողութեան եւ աղօթս արարէք:

Թղ. 374բ. Ով սուրբ հարք, որ հանէք զպատճեն զրոյս, յիշես՛իք զՍիւնկեղղոսն եւ զորդիս նորա. ով սուրբ Յովհ. Ոսկերեան եւ Ս. Նիքիթի, բարեխօս լերուք վասն Յովհաննու Վարազվաչի եւ որդւոց նորա առաջի Բրիտոսի»:

Բ. Մոսկուայի Սիւնհոգական Մատենադարանի յունարէն ձեռագրաց թ. 62 ունի իբրեւ պահպանակ երկիջեան յիշատակարան մը խոնարհի նշանադրով: Նախնարար եղած է այն վրացերէն ձեռագրի մը մասը, որ գրուած է 991ին: Այս Յիշատակարանը վրական բնագրով եւ լատիներէն թարգմանութեամբ հրատարակեց P. Peeters իւր վերոյիշեալ աշխատութեան մէջ¹⁴: Կու տամ նոյնին հայերէն թարգմանութիւնը՝ յապաւելով անկարեւոր մասերը:

«... Նովին յուսով եւ վասն յաւիտենական կենաց ես Յովհաննէս, որ Թոռնիկն կուչէի, որդի երանելի տեառն Չորտուանելի, աշխատ եղէ ի գրել մատենիս, որ կոչի Գանձարան... Արդ աղաչեմ զձեզ զամենեանս՝ զհաւատացեալսք Բրիտոսի որդւոց Տեառն մերոյ, որ զսուրբ մատեանս ընթեռնոյք, յիշես՛իք յաղօթս ձեր զիս, որ չեմս արժանի յիշելոյ ի քրիստոնեայս վասն չար գործոց իմոց...: Նոյնպէս յիշես՛իք եւ զայնոսիկ որ յինէն յիշին. եւ նախ իսկ զուսուցէին իմ զՅովհաննէս Աբուհարիթ¹⁵ եւ զեղբայրն իմ զՅովհաննէս Վարազվաչէ եւ զորդիսն մեր հոգեւոր եւ մարմնաւոր զՄիքայէլ եւ զՉորտուանէլ էլիուսովիտի¹⁶ եւ զԲաղ(ա)րատ պատրիկ եւ զՉորտուանէլ եւ զփոքրիկն¹⁷ Թոռնիկ եւ զհօգիս ծնողաց իմոց եւ զեղբարս եւ զամենայն զիման...:

Գրեցաւ սուրբ մատեանս այս յերկրին

վրաց թուականին. կոչուած մերիներէն նաեւ Հոռոմոց թուական (արձ. Անոյ Կաթողիկէին):

¹³ Մուրկիելի բոս Վրաց:

¹⁴ Analecta Bollandiana, 50, էջ 359—362:

¹⁵ Սա է Ս. Յովհաննէս Հագիտրիտ, հայրն Ս. Նիքիթիոսի եւ հիմնադիրն Աթոսի Վրաց վանքին. Հմմտ. AB., էջ 364:

¹⁶ Իմա՛ ձէξοσίβιτοι = excubitores, այս ինքն հասնորէն domesticus excubitorum, պահանորդապետ. Հմմտ. AB., էջ 367 եւ E. Stein, Studien zur Geschichte des byzantinischen Reiches. Stuttgart 1919, էջ 135 եւն:

¹⁷ Բնագրին ունի մծիրպի, այն է փոքր, կըրտսեր:

Կարնոյ յամի լինելութեան աշխարհի ՅՇ (991/2)¹⁸ և ևս չըջանի Չատկայ ՄԱ. (981), ի ձեռն իմ Միքայէլ գրչի. իսկ հաւաքեցաւ ի ձեռն իմ փծուն Ստեփանոսի: Աղօթս վասն մեր արասջիք, զի և Տէր ձեզ ողորմեացի:

Եւ ևս Յովհաննէս սիւնկեղոս¹⁹ ետու զսուրբ մատենա գայս, զառաջնորդն ուղիղ կենաց՝ ի լեառն Աթոս, յորում մարմնաւոր մարդիկ զօրէն անմարմնոցն կեան. զի և ևս ինքնին գլխովին ի նմա ընկալայ զհանդերձ միանձնաւորական»:

5. Չորտուանէլ-Թոռնիկեաց ֆիւլպրու-բիւնը Յովհաննէս Թոռնիկի այս կրկին Յիւլատակարաններու համաձայն կարելի է կազմել սյուպէս.

ԹՈՐՆԻԿ Ա.

Կոստանդին Ծիրանածին de cerim. I, 96, էջ 435, կը յիշէ այս շրջանէն *Τορνιχης Νιχό-λαος* մը, և Կեղերենոս *hist. comp.* 2, 324, *Νιχό-λαός τε καί Λέοντα τούς Τορνιχίους*, զորոնք լեւոն Գրամատիկոս (էջ 329) պարզապէս ո՛ր *Τορνιχο: Կ'անուանէ: Ասոնք 945 Յունուար 27ին կ'աքորուին (Կեղր. 324): Ասիկ հնար ըլլայ թերեւս մտածել թէ Ժ. դարուն սկիզբը կար Թոռնիկ մը, որմէ ծագած են յիշեալները. նոյնը եղած ըլլայ նաև Չորտուանի չայրը: Ուշադրութեան արժանի է որ թէ ասոնք և թէ Չորտուանէլ կրկին անուններ կը կրեն. մէկը անշուշտ տրուած է իրենց երբ կը դառնուէին յունական ծառայութեան մէջ:*

¹⁸ Արարածոց թուականը 6500 չի համապատասխաներ Չատկայի շրջանին՝ 201: Peeters (էջ 363) կը կարծէ թէ վերջոյն մէջ տասնաւոր մը դուրս ձգուած ըլլայ: Ինձ հաճողոյն կը թուի լուծել այս անդրադարձն սպառնալով. ձեռագիրը դրուած է Կարին գրական 201 = փրկչական 981/2 տարւոյն. իսկ Արարածոց 6500ին, այն է փրկչական 991/2ին (հիմ առնելով 5308/9) արտագրուած է յԱթոս: Օրինակողը, որ ձեռագրին հետ յիշատակարանս ալ օրինակած է, անփոփոխ պահած է Վրաց թուականը (Չատկայի շրջանին 201 տարին), որ անշուշտ անդրադարձական էր յԱթոս, և անոր կից տուած է արտագրութեան տարին Արարածոց 6500, որ միակ դործածական թուականն էր Բիւզանդական հոգի վրայ: Թէ Յիւլատակարան օրինակութիւն մըն է, կ'ընդունի նաև Peeters: Ուշադրութեան արժանի է որ Յովհ. Սիւնկեղոս վախճանած է 984ին, ուստի և ձեռագրին օրինակութեանն 6-7 տարի յառաջ: Տօմարադիական հայերէններուն անձանթ գրիչներ նման ժամանակագրական սխալներ կ'ընեն նաև հայերէն ձեռագրիչներու մէջ, երբ օրինակի համար Արարածոց և Հայոց թուականները միաժամանակ դործածուած են: Հայոց թուականը ճշգրիտ փոփոխած ժամանակ անփոփոխ կը պահեն Արարածոցը. հմմտ. իմ գրուածքս Քանի՞ տեսած թուական ծանօթ էր Հայոց. Կ. Պոլիս 1923, էջ 3 (արտասույթ. Թէ ողիկի Ամենուն տարեցոյցէն):

ՉՈՐՏՈՒԱՆԵՒ Ա., ԱՊՈՒՀԱՐՊ Ա., ԱՐՇՈՒՇԱՅ Ա.

Յովհ. Թոռնիկ 977ին կը խնդրէ յիշել իւր ծնողքը՝ Չորտուանէլ և Մարիամ: Թերեւս սա ըլլայ *Ζουρβανέλης* պրոտոսպարքը, զոր Վրաց Կիւրապաղատը դեսպան զրկած է Կոստանդին Ծիրանածին կայսեր (913—959)²⁰:

Չորտուանէլի եղբայրներէն յանուանէ կը յիշուին (Յիշատ. 1)՝ Ապուհարպ և Արշուշայ (Աշուշայ). զորոնք Յովհ. Թոռնիկ իւր հօրեղբայրները կ'անուանէ: Չորտուանէլ Ա., որուն ամուսինը կը յիշուի Մարիամ, ունեցաւ հինգ որդի, որոնք են Թոռնիկ Բ., Վարապաշէ Ա., Բագարատ Ա., Արշուշայ Բ. և Ապուհարպ Բ.:

ՉՈՐՏՈՒԱՆԵՒ Բ., ԹՈՐՆ ԱՊՈՒՀԱՐՊԱՅ Ա.

Ապուհարպի թուր կը յիշէ Ասողիկ (277). 1000 թուականին, զատկին կը վախճանի Դաւիթ Կիւրապաղատ և երկիրը կտակով կը յանձնէ Վասիլ Բ. կայսեր: Կայսրը կը փութայ զօրքով հասնիլ Տայոց աշխարհը տիրանալու երկրին. այս միջոցին ուսու եւ տայեցի զօրքերու մէջ դոյզն պատճառի մը համար բախում տեղի կ'ունենայ. այս կուռի ժամանակ կը սպանուի նաև «Չորտուանէլ Թոռն Ապուհարպայ»: Դժբախտաբար պատմիչը յանուանէ չէ յիշատակած Ապուհարպի որդին (կամ դուստրը), որմէ սերած էր իր թուր: Այս Ապուհարպ Ս. Յովհաննէս Ապուհարպի թիւն աներն էր, այս ինքն Ապուհարպի դուստրը կին առած էր Ապուհարպի: Ս. Եւթիմիոսի վարքին մէջ կ'ըսուի. «Քանզի կայսերացն չէր ինչ անձանթ Ապուհարպի, որ աներն էր հօրն Յովհաննու, նմին իրի ի նորին (Ապուհարպայ) շնորհացն ընկալան զՅովհաննէսը մեծապատիւ պատուով և սիրով ի Կ. Պոլիս»: Ապուհարպի որդին և Ապուհարպայ թոռն էր Ս. Եւթիմիոս, որ հօրը հետ իրրեւ պատանդ եկած էր Կ. Պոլիս, Դաւիթ Կիւրապաղատի մահէն ետքը (1000ին)²¹: «Չորտուանէլ Թոռն Ապուհարպայ» կարող է նաև Ապուհարպի զաւակը նկատուիլ, եթէ ուզենք ընդունիլ թէ Ապուհարպ չունէր արուզակ և կամ մէկէ աւելի դուստրներ: Peeters (50, 368) կ'ենթադրէ թէ Չորտուանէլ Ապուհարպ Ա. ի դստեր և Վարապաշէ Ա. ի

²⁰ Կոստ. Ծիրանածին de administr. imp. 202: *διὰ τοῦ Ζουρβανέλη πρωτοπαθολοῦ τοῦ ἀξιάτου αὐτοῦ. Marquart, Südarmerien, 528 Սամոյի տէրը կ'ուզէ ձանձնալ յանձին այս Չորտուանէլի:*

²¹ Anal. Boll., 36—37, էջ 18:

որդին ըլլայ, ուստի Ապուհարպի դուստրը ամուսնացած ըլլայ Վարապաշէի հետ. որ անհնարին է մերձամուսնութեան արգելքով:

ՅՈՎՀ. ԹՈՐՆԻԿ Բ. ՈՐԴԻ ՉՈՐՏՈՒԱՆԵՒ

Թոռնիկ կը դառնուէր զինուորական ծառայութեան մէջ. 976ին հրաժարելով աշխարհէ առանձնացած է Թորթումի վանքէն միոյն, հաւանորէն Օչքի վանքին մէջ, ուր օրինակել տուած է 977ին Բուրաստան կոչուած հաւաքածոյքը. իսկ 981ին իր յանձնարարութեամբ դրուած է Կարնոյ երկրին մէջ Գանձարան կոչուած ձեռագիրը:

Կարնոյ մօտ Գարարգէ դէպի Դուլճի գիւղ տանող ճանապարհի վրայ տեսած է Հ. Ն. Սարգիսեան խաչքար մը, որ կը կրէր արձանագրութիւնս²².

ԱՆՈՒՆ ԱՍՏՈՒՅՈՑ. ԵՍ ՅՈՎԱՆԵՒ ՈՐԴԻ ՉՈՐՏՎԱՆԵՒԻ ԿԱՌՆԵՅԻ ԶԽԱՉՍ ԶԱՅՍ Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԱՍԻԼ²³ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ

Այս ինքն «Յանուն Աստուծոյ. ևս Յովհաննէս <ս-թոռնիկ> որդի Չորտուանիկի (Չորտուանիկի) կանգնեցի զխաչս զայս ի ժամանակին Վասիլ և Կոստանդին <թագաւորացն>». ուստի 976—981 տարիներուն, երբ Յովհ. Թոռնիկ տակաւին Կարնոյ կողմերը կը դառնուէր, արդէն վանական սքեմի տակ:

977ին, երբ ապստամբեցաւ Վարդ Սիւլեւրոս կայսեր դէմ, Թէոփանոյ թագուհւոյն թախանձանքին վրայ կը ստիպուի Յովհաննէս Թոռնիկ թողուլ իւր միանձնարանն և անցած 10.000 հեծելազօրի զուլիւր քաւել ապստամբին դէմ. կը խորտակէ Վարդի բանակը և զանիկա հալածական կը վարէ մինչև Նիքիւրկերտ: Այս առթիւ կը գրէ Ասողիկ (էջ 192—193). «Վասիլ թագաւորն Յունաց զԹոռնիկ զօրավարն, որ էր յարգէն Վրաց, արեղայ ի Սուրբ Լեբինն՝ հանեալ առաքէ առ Կիւրապաղատն Տայոց Դաւիթ...: Եւ Կիւրապաղատին Դաւիթ դուստրեալ զօրոսն Վրաց և զիւլխանաց ի յանն զՉօլիկ տայ զինի Թոռնիկայ՝ պատերազմել ընդ Վարդայ բռնակալին» և ևս: Այս յաղթութեան արձագանգը պահած է Չարգմայի եկեղեցին²⁴: Այս արշաւանքի մա-

²² Տեղագրութիւնք, էջ 79:

²³ Սարգիսեան կարգացած է Վասիլի Կոստանդին. ըստ իմաստին սյուպէս ուղղելու է:

²⁴ Չարգմայի եկեղեցոյ վրայերէն արձանագրութեան մէջ իվանէ որդի Սուրայի կը յայտնէ. «Ես չինեցի զեկեղեցին ի ժամանակին, յորժամ Սիւլեւրոս ապստամբեաց ի Յոյնս. Դաւիթ Կիւրապաղատ — Տէր պահեցէ զնա — երբ թիկունս օղնականութեան սուրբ թագաւորացն և առաքեաց զմեզ զամենեանս ի բանակն: Մեք յաղթեցաք Սիւլեւրոսի: Եւ ևս յերկրին որ անուա-

սին էին նաև 981ի յիշատակարանին խօսքերը:

Յովհ. Թոռնիկ ժամանակ մը Կարնոյ կողմերը մնալէ ետքը անցաւ Աթոս, ուր Յովհ. Հագիորիտ բացած էր Վրաց վանքը: Թէ Ե՞րբ տեղափոխուեցաւ Յովհ. Թոռնիկ Աթոս, դժուար է ըսել ճշգրիտ: Ս. Եւթիմիոսի վարքին մէջ կ'ըսուի պարզապէս. «Ընդ այն ժամանակս — այս ինքն Դաւիթ Կիւրապաղատի մահէն († 1000) յառաջ — մեծն Թոռնիկ եղև յերթում աշխարհին միանձնաւոր»²⁵: Հոն կը լսէ թէ Յովհ. Ապուհարպի Ողիմպոս կը դրուանուի, կ'երթայ անոր քով. բայց զանիկա հոն չգտնելով կ'անցնի Աթոս. ուր կ'ընդունի անոր ձեռքէն «զհանդերձ վանականն»:

Այստեղ արամադրեց Յովհ. Ապուհարպի թիւն այն բոլոր ստացուածները, զորոնք Թոռնիկ ստացած էր Թէոփանէ թագուհւոյն իրրեւ վարձատրութիւնս իր Վարդ Սիւլեւրոսի վրայ տարած յաղթութեան: Այս գումարով կառուցուեցաւ Աթոսի Իվիրոն, այսինքն Վրաց վանքը, որ տեղոյն վանական հաստատութիւններու մէջ ամենէն ականաւորն եղաւ: Թէպէտ ինքն էր վանքին հիմնադիրն և պայծառացուցիչը, բայց այս պատիւը շնորհեց իւր փեսային Յովհ. Ապուհարպի թիւն:

Յովհաննէս Թոռնիկ այս թուականէն ետքը կարճ ժամանակ մը միայն ապրեցաւ. վախճանեցաւ 984ին: Մեռնելէն յառաջ Իվիրոնի նուիրած էր իր յանձնարարութեամբ դրուած այն կրկին ձեռագրիները, զորոնք յիշեցինք վերը:

Ինչպէս խաչքարի արձանագրութիւնը կը վկայէ, Թոռնիկ հայ էր, գիտէր իր մայրենի լեզուն. բայց ծէսով պատկանելով Վրաց եկեղեցոյն՝ ընտելացած էր նաև վրացերէնի. այս պարագան առիթ տուած է Ստ. Ասողկան նկատելու գինքը «յաղգէն Վրաց»:

ԲԱԳԱՐԱՏ Բ. ՈՐԴԻ ԹՈՐՆԻԿԱՅ Բ.

Թոռնիկեան Բագարատ մագիստրոս, զոր կը յիշէր 977ի յիշատակարանը, ծանօթ է Հայոց պատմութեան. կը պատմէ Ասողիկ (էջ 269), թէ 998ին, զատկէն վերջը, երբ Դաւիթ Կիւրապաղատի զօրքը պաշարած էր Խլաթը, բանակին մէջ յանկարծ խոռովութիւնս

նեալ կ'ընէ Սարսանան, ի տեղոյն որում անուն է Սարգիսիս, չինեցի զթախաս...»: M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie. 2me livraison. St. Pétersbourg 1850, էջ 133—134: Հմմտ. և Anal. Boll. 50, էջ 363—364: ²⁵ Anal. Boll. 36/37, էջ 18:

մը ծագեցաւ . Տայեցիք վայրագ փախուստի զխմեցին . «յայնմ փախստի մեռաւ մաժիւտոտան Բագարատ, որդի Թոռնիկայ արեղայի» :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԱՉՎԱԶԵ Ա. ՈՐԴԻ ԶՈՐՏՈՒԱՆԵԼԻ

Սա էր Չորտուանէլի որդին եւ եղբայրն Յովհաննէս Թոռնիկի : 977ի եւ 981ի յիշատակարաններու մէջ կ'ըսուի թէ ինքն ալ անձնատուր եղած էր վանական կեանքի, անշուշտ յՅջբ . յետոյ երբ բացուեցաւ Աթոսի վրաց վանքը, ինքն ալ միաբանեցաւ այն վանքին :

Ունինք իրմէ խաչքար մը ²⁶ Անիի Ս . Աստուածածին մատուռի մէջ, որ յետոյ վերանորոգուելով կոչուեցաւ Ս . Գրիգորի եկեղեցի : Սաչքարին արձանագրութիւնն է, առանց թուականի .

ՅԱՆՈՒՆ ԱՅ
ԵՍ ՅՈՎԱՆԵՍ ՎԱ
ՐԱՉՎԱԶԵ ՈՐԴ
Ի ԶՈՐՏՈՒԱՆԵ
ԿԻ ԿԱՆԿԵՑԻ
ՁԵԱՍՁ ԱՍՍ

Կը կարգամ՝ Յանու Աստուծոյ եւ Յովհաննէս Վարազվաչէ որդի Չորտուանիկի կանգնեցի զխաչս զայս : Չորտուանէլ թէ Կարնոյ եւ թէ այս խաչքարերու վրայ միաձեւ զըսուած է Չորտուանիկ (Չորտուանիկ) :

Վարազվաչէի որդիներէն կը յիշուին՝ Չորտուանէլ Գ ., Միքայէլ եւ Թոռնիկ Գ . :

ԶՈՐՏՈՒԱՆԵԼԻ Գ. ՈՐԴԻ ՎԱՐԱՉՎԱԶԵ

Չորտուանէլ Վարազվաչէեան 977ի յիշատակարանին մէջ «գորավար» (վր. «գորավարի») եւ «չորրորդի» կ'անուանուի, իսկ 981ի յիշատակարանին մէջ «էխուսովիտի» : Վերջին տիրադատս Blake ²⁷ յունական ἐξχοῦβιτοί բառին ազաւազած մէկ ձեւը կ'ենթադրէ, այսինքն մօտաւորապէս comes կամ domesticus excubitorum, որով կ'իմացուէր պահակներու պահակապետն : Իսկ «չորրորդի» յորջորջմանը ըլլայ թերեւս «չորրորդապետ» բառին եղծուած մէկ կերպարանքը, որ համազօր ըլլալու է էխուսովիտի :

²⁶ Նմանահանութամբ տուած է Ch. Texier, Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie, I. Paris 1842, pl. 21. Ասիկ արտասուրած է Հ . Ղ . Ալիշան, Երբակ, էջ 80 : Հ . Ղ . Ալիշան մտածք միայն լուծած է արձանագրութեան ընթերցումը . «Յանու Աստուծոյ . եւ Յովանէս . . . վանէ որդի Չորտուանիկի կանգնեցի զխաչս զայս» (անդ, 79) . Իսկ Կ . Բասմաճեան, Les inscriptions arméniennes d'Ani, de Bag-nair et de Marmachén, Paris 1931, էջ 118, կը կարգայ : «Յանու Աստուծոյ եւ Յովանի վարազվաչէի որդի Չորտուանիկի կանգնեցի զխաչս զայս» :

²⁷ Anal. Boll. 50, էջ 367 :

Սա է հաւանօրէն «Չորտուանէլ մաժիւտարոսն, եղբորորդի Թոռնիկայ արեղայի (ուստի եւ որդի Վարազվաչէի), որ բնացեալ էր ի կողմանս Դերջանայ եւ Տարօնոյ», այսինքն «զեռ եւս մնացեալ էր յապստամբացն որ ընդ Փոկասուն Վարդայ», որոնք 976—978 ապստամբած էին Վարդ Սկիւրոսի հետ Վասիլ Բ . կայսեր դէմ : Այժմ կայսրը կ'ուղարկէ Չորտուանէլի դէմ «զժանն պատրիկ, որ եւ Պոստիկ կոչուր», որ «սպան զնա ի դաշտին Բաղառնոյ ի Դերջան գաւառի ի ՆԼԹ (990) թուականին» (Ասողիկ, 251) : Peeters (369) կ'առաջարկէ ջնջել «որդի» եւ իմանալ Թոռնիկի համանուն եղբայր մը :

Նկատելով թէ Չորտուանէլի իշխանութիւնը կը տարածուէր Տարօնէն մինչեւ Դերջան, հաւանական կը թուի ինձ նոյնացնել զինքը այն Չորտուանէլի հետ, որ 970/2ին նիգակակից եղած է Վասակ պահլաւունուոյ ընդդէմ «թաղաւորին Դելումաց», որ կը քալէր դէպի Նիգ գաւառն Հայոց «մերձ յամուրն Բջնի» . «ընդ նմին»՝ Վասակայ էր, կը գրէ Մ . Ուռնայեցի, «եւ Գորգ <որ> եւ Չորտուանէլ» ²⁸ :

Չորտուանէլի այս նիգակակիցութիւնը Վասակ պահլաւունուոյ հետ կը թելադրէ խորհիլ, թէ արդեօք այս շրջանէն չէ՞ ընձիւղած Պահլաւունեաց եւ Թոռնիկեանց միջեւ այն խնամական կապը, որուն մասին կ'ակնարկէ 1072ին Փիլարտոս ուղղելով իր խօսքը Գրիգոր վկայասէր կաթողիկոսին, թէ «քո փեսայ է Թոռնիկն, զնա եւ կոչեա զնա ինձ ի հնազանդութիւն» (Ուռն ., 207) : Թէպէտ մէջտեղ 80 տարուան միջոց մը կայ, բայց Սասնոյ Թոռնիկեանց մէջ Չորտուանէլ եւ Թոռնիկ անուանց յաճախակի երեւումը ենթադրել կուտայ թէ կայ Տարօնոյ բնակարանի Չորտուանիկի եւ Սասնոյ տիրոջ Թոռնիկի մէջ արեւակցական կապ մը : Թոռնիկի հայրն է Մուշեղ, իսկ սա հաւանօրէն Չորտուանիկի որդին էր, որ կ'երեւայ թէ հօրը սպանութենէն ետքը ի Սասուն ապաստանարան դառաւ եւ տիրացաւ երկրին :

ՎԱՐԱՉՎԱԶԵ Բ .

Չորտուանիկի որդին ըլլայ թերեւս Վարազվաչէ Եղեանոյ իշխանը 1038ին, «որ էր ի հօրէ հայ եւ ի մօրէ վրացի», ինչպէս կը գրէ Չամչեան (Բ . 918), յայտնի չէ ի՞նչ աղբիւրէ

²⁸ Մ . Ուռն ., էջ 12 : Էջմ . Տպագիրն ունի «Գորգ եւ Չորտուանէլ» . Երևուողէ՞մ օրինակին մէջ կը պակսի եւր :

առած : Ասոր մասին կը պատմէ Սկիւլիցէս ²⁹, թէ մեղսակից եղած է Կոստանդին Դիոգենէսի, Թրակիոյ դուքսին, որ Վասիլ կայսեր դէմ զլուր բարձրացնել կը խորհէր : Դաւադրութիւնը կը յայտնուի . մեղսակիցներու հետ կը բռնուի եւ կ'աքսորուի նաեւ Վարազվաչէ . իր մասին այսպէս կը գրէ պատմագիրը . Լ'εὐρωγὸς τε καὶ Βαρασβατῆς, ὁ ἐν ὄρει τῷ Ἄθω τῆν τῶν Ἰβήρων μονὴν συστραφένος, οἱ τοῦ πατρικοῦ Θεοδῶτος ἀνεψιοί, այս ինքն «Գէորգ եւ Վարազվաչէ, որ Աթոս լեռան վրայ վրաց վանքը հիմնարկեց, Թէոդատոս պատրիկի ազգականները» : Peeters ³⁰ այս տեղիքը կ'առաջարկէ կարգաւ՝ Γεώργιος τε <ὁ> καὶ Βαρασβατῆς, ուստի «Գէորգ որ եւ Վարազվաչէ» : Թէպէտ Վարազվաչէ վրաց վանքին հիմնադիրը չէ, բայց կը պատմուի Ս . Եւթիմիոսի վարքին մէջ, թէ սուրբը վանքին առաջնորդութիւնը յանձնած է իւր ազգականներէն մէկուն, որ Գէորգ կը կոչուէր, զոր իւր հայրը Ս . Յովհաննէս կանխաւ նշանակած էր իրրեւ ապագայ յաջորդ վանահայրութեան : Այս Գէորգը, որ քաջ վանահայր մըն էր եւ արքունիքի քով աղբեցիկ անձնաւորութիւն մը, ցոյց կու տար իր մէջ մեծ միտուութիւն դէպի Յոյները, այս պատճառաւ ալ ծագեցաւ իր եւ վրացի միաբաններու մէջ սաստիկ վէճ : Յետոյ Դիոգենի դաւադրութեան մասնակցած ըլլալուն համար արքունեցաւ Մոնթբաաներու վանքը : Եթէ նոյն է այս Գէորգը Սկիւլիցէսի յիշած Գէորգ-Վարազվաչէի հետ, պէտք է զինքը Վարազվաչէի թոռը նկատել :

ՄԻՔԱՅԷԼ

Միքայէլ կրօնաւորած է Աթոսի վրաց վանքին մէջ . իր ձեռքով զրուած է Թ . 2 Յիշատակարանը 981ին :

ԹՈՐՆԻԿ Գ .

Թոռնիկ, զոր Թ . 2 Յիշատակարանը «մծիրայի», այն է փոքրիկ կ'անուանէ, հաւանօրէն պէտք է Լեւոն-Թոռնիկի հետնոյնացնել : Սա ի վերս զօրավար էր . իր բնակալութեան պատճառաւ ամբաստանուեցաւ կայսեր առաջ, որ զրկեց զինքը իշխանութենէն եւ Աղրիանուպոլիս վանք մը զբաւ, ուր եւ ստացաւ Լեւոն անունը : Զայրացած իրեն դէմ զործուած այս անարդարութեան համար, զրկուեց մերձակայ դուքսերը կայսեր դէմ :

²⁹ Hist. comped. II, 487—488 .
³⁰ Anal. Boll. 1932, էջ 366 :

Անոնք ապստամբեցան Կոստանդին Թ . Մոնթմախի դէմ (1047) . եւ զԼեւոն-Թոռնիկ կայսր հռչակելով քալեցին մայրաքաղաքին վրայ : Երբ անկարելի եղաւ պաշտպանել քաղաքը՝ քաղաքացիները նենդով բացին դռները իր առաջ, խոստանալով թէ Կոստանդին մահէն ետքը իրեն պիտի յանձնեն թագը : Լեւոն-Թոռնիկ կը կալանաւորուի եւ կը կորսնցնէ կայսեր հրամանաւ երկու աչքերուն լոյսը ³¹ : Կեդրենոս անոր «ազգակիցն» (συγγονός) կ'անուանէ զΒατάτζης (կարդա՞լ Βα<ρ>σ<σ>βα<τ>τζης) . որ նոյն շրջանին միջամուխ եղած է նոյնպէս քաղաքական անցուղարձերու մէջ :

ԲԱԳԱՐԱՏ Ա. , ԱՇՈՒՇԱՅ Բ. , ԱՊՈՒՀԱՐՊ Բ. ՈՐԴԻԻ Ա. ԶՈՐՏՈՒԱՆԵԼԻ

Ասոնց մասին պատմութիւնը յիշատակութիւն չէ պահած : Ասոնցմէ մէկուն կամ միւսին որդիներն են յաջորդները :

ԶՈՐՏՈՒԱՆԵԼԻ Գ . ԵՒ ԲԱԳԱՐԱՏ Գ . ԵՂԲՈՐՈՐԴԻԿ ԹՈՐՆԻԿԱՅ Բ .

Թ . 1 եւ 2 Յիշատակարաններու մէջ բացի Վարազվաչէի որդիներէն կը յիշուին նաեւ «Եղբորորդիներ» Բագարատ պատրիկ եւ Չորտուանէլ, առանց անոնց հայրանունները յիշատակելու : Ասոնք կարող են ըլլալ միայն Բագարատ Ա .-ի, Աշուշայ Բ .-ի եւ Ապուհարպ Բ .-ի որդիները, Ա . Չորտուանէլի թոռները : Բագարատ պատրիկի մասին պատմութեան մէջ կը պակսի որ եւ է յիշատակութիւն :

Չորտուանէլի մասին պէտք է իմանալ Ասողկան հետեւեալ տեղիքը (էջ 265), ուր կը կ'ըսուի թէ Դալասանոս Մաղիստրոս 988ին Անաթոլի առջեւ Եգիպտացոց ամիրայի Ազադի որդւոյն դէմ կուռի կ'ելլէ եւ կը մղէ յետս : Երբ Յոյները թշնամոյն թողուցած աւարով կը զբաղէին, թշնամին յանկարծ ետ կը դառնայ եւ կը կոտորէ զանոնք . «զյուրվս ի նոցանէ ձերբակալ արարեալ տանէին, ընդ այլն եւ զՉորտուանէլ պատրիկն՝ եղբորորդին Թոռնիկայ արեղայի» :

Թոռնիկայ եւ Վարազվաչէի ընտրուին (°) է Գալիք, որ ինք զինքը 917ի յիշատակարան

³¹ Կեդրեն . Բ . 563ին : Մատթ . Ուռն . 100—101 կը գրէ ի մէջ այլոց, յայն 1046 : «Յայսմ թուականութեան Հայոց պատրիկ ոմն Թոռնիկ ապստամբեաց ի վերայ Մոնթմախին, որ է ի քաղաքէն Անդանուպոլսէ, սրբ քաջ եւ հօր եւ պատերազմող» : Հմմտ . Robert Schütte, Der Aufstand des Leon Tornikes im Jahre 1047. Plauen 1896 : Հ . Կ . Տէր-Սահակեան, Բագարատ վէպ, 1908, էջ 390—391 :

նին մէջ կ'անուանէ «որդի քեռ հօրն Մի- քայէլը»: Թերեւս իմացուի նաեւ Միքայէլի քեռորդին, ուստի Վարազվազէի Թոռնիկը:

ՉՈՐՏՈՒՄԱՆԷԼ Ե.

Մատթ. Ուռհ. յամն 1049/50 կը գրէ (էջ 107). «Յորժամ հասանէր զօրքն Յունաց ի յարեւելք՝ Կամենն եւ Առօնն եւ Գրիգոր Վա- սակայ որդին՝ կոչեցին զհետ իւրեանց զԼի- պարիտն զՎրաց իշխանն. եւ հասեալ նոցա ի բերդն որ կոչի Կապուտու» կ'ամբայնան. «յայնժամ եկին զօրքն այլազգեացն ի վերայ Լիպարիտն՝ առն քաջին. եւ նորա հանեալ զպահապանս ի գիշերի՝ զքուերորդին իւր զՉորտուանէն՝ զայրն հզօր եւ պատերազ- մող»: Օրը շարաթ ըլլալուն Լիպարիտ չ'ու- գեր բերդէն դուրս դալ. «յայնժամ Չորտուա- նէն որպէս առիւծ ի գիշերին բախէր զճա- կատ այլազգեացն. եւ մինչդեռ վարէր զնո- սա, զիպեալ եղեւ նեա մի ի բերան նորա եւ ընդ ծոծրակն ելանէր եւ այնպէս մեռանէր Չորտուանէն, այրն քաջ եւ հզօր»:

Այս հատուածին մէջ չէ յիշուած Չոր- տուանի չայրանունը. որով չենք կրնար Թոռնիկեանց ծառին մէջ իր տեղը գտնել: Բայց հետաքրքրական է, որ անոր մայրը Լիպարիտի քոյրն էր:

Բիւզանդական գրականութեան մէջ կը

յիշուին դեռ ուրիշ Թոռնիկներ ալ, որոնք գործած են Կ Պոլիս ԺԲ. դարուն: Յիշենք հոս՝

Գեորգ Թոռնիկ, կոչուած μαϊστωρ τῶν ρητόρων. գրած է Ներքողեան մը Իսահակ Անդեղոս կայսեր վրայ. եւ ուրիշ մըն ալ Գէորգ պատրիարքի (1192—1199) վրայ ³²:

Դեմետրիոս Թոռնիկ եպիսկոպոս Կա- տորիայի, որ յայտնի է իւր Լատինացոց զէմ գրած հակաճառութիւններով ³³:

Եւքիմիոս Թոռնիկ, որ խօսած է դամբա- նական մը Աթէնքի Նիկողայոս մետրապոլիտի († 1175) վրայ ³⁴:

Անդրոնիկոս Թոռնիկ Կոմնենոս, Ժ.Գ. դա՞ր, որուն տապանադիրը կը յիշուի ³⁵:

6. Ինչպէս ցոյց կու տայ պատմութիւնը, Թոռնիկեանց այս ճիւղը երեւելի հանդիսացաւ աւելի իւր ծառայութիւններով բիւզանդական բանակին մէջ: Միշտ աւելի բարձր դիրքի ձգտելով՝ հեռացան բնիկ ժառանգութենէն, զաղթեցին զէպի կայսերանիստ մայրաքա- զաք, հոս կամայ ահամայ միջամուխ եղան քաղաքային եւ քաղաքական դաւադրութեանց մէջ, նոյն իսկ ի խնդիր կայսերական թաղին, եւ կրեցին միշտ պարտութիւն: Թոռնիկ Բ. «Մեծ», ինչպէս կը կոչեն զինքը ժամանա- կակիցները, եղաւ միակ պարծանքը տոհմին: Թերեւս մասամբ մայր երկրի անսպահո-

վութեան եւ մասամբ օտարասիրութեան պատճառաւ նաեւ վանական անդորրութեան հետամուտները վնասեցին հեռուները իրենց ճգնախայր: Ս. Լեոան վրայ բացուած Վրաց վանքը, թէպէտ օժանդակեց վրական գրական- նութեան պայծառութեան, բայց եղաւ ազի- տարեր հայրենի մենաստաններուն համար, որոնք եղան մարդաթափուր: Աթոսի մէջ՝ շրջապատուած յոյն մենաստաններէ, ենթար- կուեցան վանականք յոյն ազդեցութեան. ու- շադբաւ են Վարազվազէ Բ. ի յունամէտ ձգ- տումները: Նոյն հոսանքին կուլ եկան նաեւ այն Թոռնիկեանք, որոնք ուղեցին իրբեւ հոս- տոր կամ մատենագիր փայլել:

Թոռնիկեանք հայ էին ծագումով: բայց դաւանեցան իրենք զիրենք նախ վրացի եւ ապա յայն. եւ իրբեւ սյապիսի ձուլուեցան յոյն տարրին հետ եւ անհետ եղան պատմութենէ:

(Շարունակելի):

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԵՐՈՒ ՍԿՋՐՆԵՒՈՐՈՒ- ԹԻՒՆԸ ԸՍՑ Յ. ՄԱՐԿՈՒԱՐՏԻ

Մեծանուն հայագէտին թողած անտիպ գրութիւնները մէջ կը գտնուի նաեւ գեղեցիկ եկեղեցադատմական ուսումնասիրութիւն մը այս խորագրով «Հայկական եպ. թեմերու սկզբնաւորութիւնը. հայ աւանդութեան քննա- կան ուսումնասիրութիւն ¹»: Հ. Յ. Մեսինա կարեւոր համարած է իրաւամբ հրատարակել զայն Orientalia Christiana շարքին մէջ: Հան- գուցեալ հեղինակը դեռ վերջին գոյնը չէր տուած գործին, ինչպէս գրութեան վիճա- կէն կը տեսնուի ². նա հաւանօրէն մտա- զիր էր դեռ բանիլ վրան, երբ մահը վրայ հասաւ: Թէպէտ գրութիւնս իւր վերջնա- կան խմբագրութեամբ ըյս չէ տեսած, բայց եւ այնպէս կը բովանդակէ թանկագին նիւ- թեր հայ աշխարհիկ ու եկեղեցական պատ- մութեան, աշխարհադրութեան եւ ժամանա- կագրութեան համար. մենք կը բաղձանք հե- ղինակին զլիսաւոր նպատակը՝ հայ թեմերու սկզբնաւորութիւնը ներկայացնել հայ ընթեր- ցողներուն համառօտ ամփոփմամբ:

¹ J. Markwart, Die Entstehung der armenischen Bistümer. Kritische Untersuchung der armenischen Überlieferung. Herausgegeben von J. Mes- sina S. J. Roma 1932. [Orientalia Christiana, Vol. XXVI. — 2.]
² Յատաշարան, էջ 5—6:

Եպիսկոպոսներու քիւր: Հայ եկեղեցա- կան պատմիչները կը սիրեն մեծ թիւով ներ- կայացնել հայ եպիսկոպոսներն ու թեմերը: «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Պարթեւի Հայոց հայրապետի», որ առանց տարակոյսի ԺԲ. դարէն ³ է, Ներսէսի զէպի Կեսարիա ձամբորդութեան ուղեկից կը զնէ յանուանէ 13 եպիսկոպոս՝ թեմերով ու կը յաւելու «եւ այլ հնգետասան եպիսկոպոսք, որ պատրաս- տեցան ընդ իշխանսն»: Փաւստոս չի զիտեր ամենեւին, որ Ներսէսի եպիսկոպոս ընկերա- ցած ըլլայ. կը յիշէ սակայն թէ Ներսէսի ըն- տրութիւնը խնդրելու համար Արշակ թագա-ւորին եկած էին նաեւ «բազմութիւն եպիսկո- պոսաց Հայոց» ⁴:


Ուխտանէս առանձին գլխով կը խօսի այն

³ Պատմութիւն սրբոյն Ներսիսի: Վենետ. 1853, էջ 25—26 (Սոփերք Հայի. 2.): Փաստեր՝ հոն կը յիշուին Ուղեքը, էջ 70, 79: աղեղնաւորներու արշաւը, էջ 91: Երուսաղէմի Հոռոմայեցիներէն—Փրանդաներէն վերստին անտեւելը, էջ 90: Կը գործածուի Սուտն—Մեթոսիոս, Յովհ. Կոզեան, Յովհ. Սարկաւազ, Մելիտինէն Հայ ազգի եպիսկոպոս կը յիշէ, որ առաջին անգամ ԺԱ. դա- րուն եղած է:

⁴ Փաւստ., Պատմ. Հայ., Վենետ. 1832, Դ. 4, էջ 71—72:

Պրոֆ. Մարկուարտ գործքին կցած է հետաքրքրա- կան ճշգրտներ Ներսէսի կեանքին հայոց. հոս կ'ամ- փոփնէր զայն:

Փաւստոսի համաձայն՝ Ներսէսի ընտրութիւնն անմիջապէս կը յաջորդէ Արշակի դահակութեան, որուն թուականը սակայն որոշ չէ: Տիրակ թագաւորի եւ Արշակի Պարսից գերութենէն ազատագրուած՝ Վա- զէսի եւ Ներսէսի միջեւ խաղաղութեան դաշինք մը գոյանալուն պատճառաւ եւ Արշակի՝ շահէն թագաւոր պատիւիւր պատմական արժէք չեն ներկայացնէր. այլ միայն յիշատակն են Գաղերիոսի եւ Ներսէսի խաղա- ղութեան գաշնագրին (298): Թէ Տիրան ինչ վախճան ունեցաւ, կը մնայ անյայտ. տ. Die Entstehung, p. 221—222: Ս. Աթանոսի 358ին անսպասուականներու ուղղած ջատագովութիւնը կրնայ մեզի ժամանակա- գրական կողան ծառայել. ան կը յիշէ իրր նոր զէպք մը՝ Արշակի Ողիմպոսի հետ ամուսնութիւնը. Փաւ- ստոս կը պատմէ պատգամադրութիւն մը Ներսէսի զխաւորութեամբ, որուն նպատակն էր դաշինք կնքել, աւելի ճիշտ՝ նորոգել, եւ անտարակոյս՝ արքային բարձրատիճան հարս մը գտնել: Շատ հաւանական է, որ Արշակի ամուսնութիւնը տեղի ունեցած ըլլայ 357ին, վասն զի Ս. Աթանոս իրբեւ բոլորովին նոր զէպքի մը վրայ կը խօսի: Քաղաքական պատճառնե- րով՝ այդ պատգամաւորութիւնը եւ ամուսնութիւնը տեղի ունեցան անտարակոյս Արշակի դահակութեան եւ Ներսէսի աթոռակալութեան սկիզբը, որ այս հի- ման վրայ՝ կարելի է զնել 358ին, ամէնէն կանուխ 355ին: 360ին դեռ, երբ Արշակ Կեսարիա գնաց Կոս- տանդինո կայսեր հետ բանակցելու, այդ ամուսնու- թեան որոշ չափով իրր խնամութիւն, քաղաքական մեծ նշանակութիւն կ'ընծայուէր: Հաւանաբար ամուս- նութեան յաջորդ տարին՝ 358ին կործանեցաւ Արշա- կաւան, որմէ քիչ յառաջ վերագարծած էր կաթողի- կոսը. հետեւաբար Ներսէսի «ինն անս» արքայի լիւր, պէտք ենք ուղղել իրր «ինն ամիսս» բացակայել: Այս- չափ երկար ժամանակ թերեւս նա կեցաւ Եւստատիոս Սերաստացոյն քով, վասն զի Ներսէսի յաջորդ ազդե- ասինամ գործունէութիւնը շատ կը նմանի Սերաստաց- այն ուղղութեան, եւ ասով կարելի է մեկնել. տես Die Entstehung, p. 223—231:



³² Krumbacher, Geschichte der byzantinischen Literatur, 1897, էջ 472—473:
³³ Անդ., էջ 91, 442, 425. Բազմազգայ, 1908, էջ 391—392:

³⁴ Հմմտ. Byz. Zeitschrift 11 (1902), 684:
³⁵ Հմմտ. Byz. Zeitschrift 5 (1896), 552: